

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ սույն թվականի փետրվարի 24-ին, կիրակի օրը, Ս. Գայանե վանքի տաճարում տեղի է ունենում քահանայական ձեռնադրություն և օծում:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագի արարողությունը: Օրվա պատարագիչն է Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

«Ողջույն»-ից առաջ պատարագիչ սրբազան հայրը, համաձայն «Ձեռնադրության Մաշտոց»-ի, կատարում է ձեռնադրության կարգը: Այդ օրը քահանա են ձեռնադրվում հոգևոր ճեմարանի 1979 թվականի շրջանավարտ Հովհաննես սրկ. Ղազարյանը և հոգևոր ճեմարանի այս տարվա քահանայական լսարանի ուսանողներ Օնիկ սրկ. Լուսարարյանը, Խաչատուր սրկ. Մատարյանը, Ղևոնդ սրկ. Հարությունյանը և Անդրանիկ սրկ. Օհանյանը:

Նորընծաների քահանայական կոչման արարողությունը կատարվել էր նույն տաճարում՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի:

Ձեռնադրությունից հետո, «Հայր մեր»-ից առաջ, Հուսիկ սրբազանը քարոզում է հավուր պատշաճի, շնորհավորում նորընծաներին ու մաղթում, որ նրանք լինեն հավատարիմ սպասավորները Հայաստանյայց մեր Սուրբ Եկեղեցու:

Պատարագից հետո Հուսիկ արքեպ. Սանթուրյանը հինգ նորընծաներին, Վեհարանում ներկայացնում է Վեհափառ Հայրապետին՝ ստանալու համար Նրա օրհնությունը: Ի դիմաց նորընծաների Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհակալական խոսք է ասում Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանը:

Նորին Սրբությունը, շնորհավորելով նորընծա քահանաներին, հայտնում է Իր ուրախությունը և տալիս հայրական Իր թելադրանքները և մաղթում, որ նրանք լինեն մեր եկեղեցու ազնիվ ծառայողները, որպես «Մշակք առանց ամօթոյ»:

**Տ. Բարսեղ քահանա Ղազարյան.** ծնվել է 1955 թվականի հունիսի 1-ին, Հոկտեմբերյան քաղաքում: Ավազանի անունն է՝ Հովհաննես:

1970 թ., միջնակարգ կրթությունը ստանալուց հետո, ընդունվել է հոգևոր ճեմարան և այն ավարտել 1979 թվականին: 1978 թ. մայիսի 27-ին ձեռնադրվել է սարկավագ:

**Տ. Օհան քահանա Լուսարարյան.** ծնվել է 1956 թվականի մայիսի 22-ին Կիպրոսի Նիկոզիա քաղաքում: Ավազանի անունն է՝ Օնիկ:

1962 թ. ծնողների հետ ներգաղթել է Հայաստան: 1971 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան և սովորել մինչև 1974 թվականը: 1978 թ. վերադարձել է հոգևոր ճեմարան՝ այս անգամ որպես ազատ ունկնդիր: 1979 թ. մարտի 4-ին ձեռնադրվել է սարկավագ:

**Տ. Գրիգոր քահանա Օհանյան.** ծնվել է 1938 թվականին Մուսալեռում: Ավազանի անունն է՝ Անդրանիկ:

1954 թ. ավարտել է Բեյրութի Թեքեյան վարժարանը: 1978 թ. հետևել է Անթիլիասի դպրեվանքի և 1979 թվականից՝ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում հետևում է քահանայական լսարանի դասընթացներին: 1979 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ:

**Տ. Նաիրեկ քահանա Մատարյան.** ծնվել է 1946 թվականին Սիրիայի Այնըլարաբ գյուղաքաղաքում: Ավազանի անունն է՝ Խաչատուր: Տեղի Ավետիս Սարրաֆյանի անվան դպրոցը ավարտելուց հետո, 1960 թ. ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան, ուր սովորել է մինչև 1962 թվականը: 1965 թ. ծնողների հետ ներգաղթել է Հայաստան: Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանն ավարտելուց հետո, ընդունվել է Կոմիտասի անվան կոնսերվատորիա: 1966—69 թվականներին եղել է Մայր տաճարի երգչախմբի անդամ: 1979 թ. հոկտեմբերից հետևում է հոգևոր ճեմարանի քահանայական դասընթացներին: 1980 թվականի փետրվարի 10-ին ձեռնադրվել է սարկավագ:

**Տ. Ղևոնդ քահանա Հարությունյան.** ծնվել է 1936 թ. հունվարի 9-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Ավազանի անունն է՝ Ղևոնդ: Նախնական կրթությունը ստացել է ֆրանսիական դպրոցում: 1947 թ. ծնողների հետ ներգաղթել է Հայաստան: 1955 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը: 1958 թ. ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա և այն ավարտել 1965 թվականին: 1960 թվականից Մայր տաճարի երգչախմբի անդամ է և միաժամանակ՝ փոխխմբավար: 15 տարի դասախոսել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: 1979 թ. հոկտեմբերից հետևում է հոգևոր ճեմարանի քահանայական դասընթացներին: 1980 թ. փետրվարի 10-ին ձեռնադրվել է սարկավագ:

Նորընծա քահանա հայրերն իրենց քառասունքն անցկացնում են Մայր Աթոռում, որից հետո Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ հոգևոր ծառայության կնվիրվեն համապատասխան վայրերում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծաներին և մաղթում, որ նրանք լինեն ճշմարիտ հովիվներ մեր Եկեղեցու հոգևոր ծառայության ասպարեզում և հանդիսանան «Մշակք առանց ամօթոյ»: